գրգռող, այլ միշտ լուռ, քաղաքավարի ու պատշաճ: Եւ հէնց որ շարժւում ես, բոլորն էլ իսկոյն նոյն հոսանքով շարժւում են առաջ, շարունակելով իրանց զբօսանքը:

Ճապոնացին սիրում է գիշերը ուրախ անցկացնել: Մի շէնքից լսւում է թմբուկի ձայնը, որ անցորդներին ներս է կանչում ականջ դնելու թզուկի ծիծաղաշարժ երգերին, եւ արդէն դրսից երեւում է, թէ ինչպէս հմայւած ամբողջ հասարակութիւնը թուլանում է ծիծաղից:

Մի այլ տեղում պարում է շնիկը եւ զանազան ֆօկուսներ անում. միւս կողմում տէրը ինքը կանգնած է լուսաւորւած սենեակի մուտքի առաջ եւ ներս է հրաւիրում նայելու իր օձերին ու սողուններին: Այստեղ երգում են, այնտեղ պարում են. քիչ հեռու փայլփլում են թատրոնի ճրագները, որտեղ ներկայացումը բնաւ չի ընդհատւում ամբողջ ժամերով:

Ճապոնական թատրոնը մեծ քառանկիւնի շէնք է: Երկրորդ յարկում կան օթեակներ բեմի երկու կողմից: Մեզ առաջնորդեցին այնտեղ ու յատկապէս մեզ համար աթոռ բերին: Պերզ էր, որ այդ աթոռները, ինչպէս եւ օթեակները, մի գիջում էր Արեւմուտքի ճաշակին: Իսկական հետաքրքրականն ու բնորոշը ցածն էր, պարտերը, որ իսկոյն գրաւեց իմ բոլոր ուշադրութիւնս: Նախ ի հարկէ չկան նստարաններ, որոնք երկար անվերջ շարքերով բռնում են մեր պարտերի ամբողջ լայնքը: Դրա փոխարէն ամբողջ դահլիճը կազմւած է քառակուսի փոսերից, որոնք միմեանցից բաժանւում են մի մարդու անցնելու չափ նեղ ու բարձրադիր ուղիներով, այնպէս որ ամբողջ յատակը միասին վերեւից նմանում է շահմատի տախտակին, որի քառակուսիների մէջ նստած են հանդիսականները առանձին-առանձին կամ ընտանիքներով: Մինչդեռ ուղիների վրայով վազ են տալիս անդադար